24 հունիսի 2024թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ԱՁ Տարոն Մաթևոսյանին

Հարգելի Տարոն Մաթևոսյան,

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) ԱՁ Տարոն Մաթևոսյանի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2024թ.-ի հունիսի 04-ին կնքվել է համաձայնագիր, որով ուժի մեջ է մտել 2024թ.-ի մայիսի 30-ին կնքված **ԱՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/18-1** ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները: Ձեր կողմից 20.06.2024թ. ներկայացվել է գրություն, համաձայն որի հրաժարվում եք Պայմանագրի 10, 11, 16, 17 և 19 չափաբաժինների մատակարարումից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով ՀՀ Արմավիրի մարզ Արմավիրի համայնքապետարանը հարկադրված է 2024թ.-ի հունիսի 25-ից Պայմանագիրը նշված չափաբաժինների մասով մասնակի միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 3 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 18975 (տասնութ հազար ինը հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամի և 12650 (տասներկու հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին (**ՀՀ Ֆինանսների նախարարություն 900335201092**):

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն ԱՁ Տարոն Մաթևոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Հարգանքով՝

Արմավիրի համայնքի ղեկավար՝ **Վ. Սարգսյան**